ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Արթուր Ալեքսանյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի պետ:

2) Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2024 թվականի ապրիլի 29-ից մինչև մայիսի 3-ը:

3) Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ:

4) Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպվող «Հարկերի հավաքագրում և ժամկետանց պարտավորությունների կառավարում/Tax Collection and Arrears Management» թեմայով դասընթացին և զարգացնել մասնագիտական գիտելիքները:

5) Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) հարկերի հավաքագրումն իրականացնելու ընթացակարգերը,

2) հարկային պարտավորությունները մինչև ժամկետանց դառնալը հավաքագրելու նպատակով կիրառվող գործիքները,

3) ժամկետանց հարկային պարտավորությունների հավաքագրման համար միջազգային փորձում կիրառվող մոտեցումները,

4) հարկերի հավաքագրման ռազմավարություն ունենալու կարևորությունը և անհրաժեշտությունը,

5) հարկային մարմնի ռեսուրսների բաշխման մոտեցումները:

6) Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ելույթներ և առանձին հանդիպումներ տեղի չեն ունեցել:

Բոլոր դասախոսություններն իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ : Կազմակերպվել են խմբային աշխատանքներ և մասնակիցների կողմից կատարված աշխատանքների հիման վրա պատրաստվել ու ներկայացվել են շնորհանդեսներ :

7) Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8) Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ներկայացված նյութերը և քննարկված թեմաները համապատասխանում էին ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության առջև դրված խնդիրներին, դրանք կիրառելի են վարչության կողմից հարկային վարչարարության մեթոդաբանության մշակման ժամանակ:

9) Ստորագրությունը, ամսաթիվը:

Եկամուտների քաղաքականության
և հարկային վարչարարության
մեթոդաբանության բաժնի պետ

Արթուր Ալեքսանյան

08 մայիսի 2024թ.